ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ, Հայկական հետախուզությունը Առաջին հանրապետության տարիներին *(1918-1920 թթ.)*, Ե. , Ասողիկ , 2003, 228 էջ:

Հրապարակի վրա է ուշագրավ մի գիրք, որում, մեր կարծիքով առաջին անգամ հայկական պատմագիտության մեջ, բավականաչափ հաջող փորձ է արվում վերհանելու և ներկայացնելու հայկական հետախուզական ծառայությունների ստեղծման ու կազմակերպման գործընթացի ամբողջական նկարագիրը 1918-1920-ական թվականներին, որն առ այսր բոլորովին չուսումնասիրված հիմնախնդիր է: Հեղինակը՝ Վանիկ Վիրաբյանը, փաստարկված մոտեցումներով հերքում է այն թյուր տեսակետը, թե Հայաստանի Առաջին Հանրապետությունը չի ունեցել հատուկ ծառայություններ՝ հետախուզություն և հակահետախուզություն: Ընդհանուր առմամբ, գրքում բերված հարուստ արխիվային և այլ փաստերը պերճախոս վկայում են, որ հետախուզությունը և հակահետախուզությունը, ապրելով կայացման ոչ միանշանակ ու դժվարին գործընթացներ, Հայաստանում և նրա հարակից երկրներում, ծավալել են նաև բազմապլան, դժվարություններով ու հիասթափություններով լի գործունեություն՝ փորձելով ազգային անվտանգության տեսանկյունից արժեքավոր տեղեկատվություն հայթայթել և արդյունավետորեն հակազդել Հայաստանի Հանրապետության նկատմամբ թշնամաբար տրամադրված պետությունների հակահայ քայլերին ու գործողություններին: Ողջունելի է, որ հեղինակը մի ամբողջության մեջ ներկայացրել է հետազոտված հիմնահարցը՝ բացահայտելով հայկական հետախուզության գործունեությունը թե Վրաստանում, թե Ադրբեջանում, թե Թուրքիայում և թե ընդհանրապես այլ երկրներում :

Վ. Վիրաբյանը փորձել է նաև բացահայտել Առաջին աշխարհամարտից հետո Հայաստանում մնացած ռուսական կադրային զինվորականության դերը հայկական հետախուզության կայացման բազմաբնույթ ու դժվարին գործընթացներում: Վ. Վիրաբյանը հստակություն է մտցրել նաև հայկական հետախուզության ղեկավար մարմինների և ՀՀ կառավարության միջև փոխհարաբերությունների հարցի բնագավառում՝ վերհանելով առկա հակասությունները, ինչպես նաև սայթաքումները, մասնավորապես այն տեսանկյունից, թե ինչու են կառավարող շրջանները ոչ բավարար ուշադրությամբ վերաբերվել հետախուզության հայթայթած տեղեկատվությանը, որի հաշվառումը կարող էր լուրջ փոփոխություններ մտցնել Հայաստանի Հանրապետության կողմից մշակվող և իրականացվող ռազմաքաղաքական գործողությունների ու գործընթացների ձեռագրում՝ ակնկալելով համապատասխան դրական արդյունքներ հայ ժողովրդի համար:

Վ. Վիրաբյանը սույն արժեքավոր աշխատության մեջ բացահայտել է մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի քաղաքականության հետամտած իրական նպատակները Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում՝ արդարացիորեն շեշտելով, որ դա ամենևին էլ չէր բխում հայ ժողովրդի նկատմամբ «բարեկամական» ձգտումների բովանդակությունից, այլ հիմքում ուներ գործնական տնտեսական-քաղաքական լուրջ շահեր: Հեղինակը ճիշտ եզրահանգում է անում այն մասին, որ մեծ տերությունները, մասնավորապես, Մեծ Բրիտանիան զբաղված էին այսպես կոչված «չեզոք գոտիներ կամ զոնաներ» ստեղծելով Անդրկովկասում, նմանատիպ եղանակներով հանդարտեցնելով երկրամասը, ընդսմին հանդես գալով անդրկովկասյան ժողովուրդների միջև «խաղաղության և բարեկամության» հաստատման փարիսեցիական լոզունգներով (էջ 33 - 39):

Վանիկ Վիրաբյանը որոշակի ուշադրություն է դարձրել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմաքաղաքական գործունեությանը՝ հետախուզության գործի կազմակերպման տեսանկյունից վերհանելով այդ բնագավառում ձեռնարկված քայլերը, հմտորեն օգտագործելով իր ձեռքի տակ եղած արխիվային համապատասխան հնարավորությունները: Միաժամանակ, հեղինակն ուշադրությունը արդարացիորեն բևեռել է այն հանգամանքի պարզաբանման վրա, որ ամեն մի լուրջ պետության «աչքն ու ականջը» հանդիսացող հետախուզության ու հակահետախուզության կազմակերպման բնագավառում 1918-1920 թթ. դժվարին օրերին եղել են ֆինանսատեխնիկական ու կադրային բնույթի ահռելի խոչընդոտներ, երբեմն էլ արհեստական, չնայած ՀՀ կառավարության ջանքերին՝ իր սուղ միջոցներից կոնկրետ գումարներ հատկացնել չափազանց կարևորագույն այդ բնագավառում գործերի բարձիթողի վիճակը շտկելու և հաղթահարելու համար: Հեղինակն իրավացիորեն նշել է, որ կարելի էր ավելին անել, եթե չլիներ «մաուզերիստական» խմբակային անարխիան Հայաստանում, եթե, իհարկե, իշխանության մարմինները ի զորու լինեին վճռաբար կասեցնելու քաոսն ու անիշխանությունը, և որոշ անհատների ու խմբերի կողմից անտեղի վատնվող հսկայական միջոցները նպատակամղեին հետախուզության գործի կազմակերպմանը (էջ 116-119):

Վ.Վիրաբյանի հետազոտության կարևոր արդյունքներից է այն, որ վերջինս, անշուշտ, չգերագնահատելով հետախուզության ու հակահետախուզության հնարավորությունները և կատարված աշխատանքը, միաժամանակ, եկել է օբյեկտիվ եզրահանգման, որ հատուկ ծառայությունների հայթայթած տեղեկատվությունը, իր բոլոր թերություններով հանդերձ, լիուլի բավարար էր, որպեսզի կուսակցական-կառավարական շրջանները որոշակիորեն զգուշանային և սթափվեին «սևբյան շլացումից ու թմբիրից», խելամտորեն հաշվարկեին իրենց հնարավորությունները և գնահատեին աշխարհաքաղաքական իրավիճակում կատարված կարևորագույն ելևէջումներն ու փոփոխությունները՝ ի շահ Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության և տարածքային ամբողջականության, ինչն, ավաղ, չարվեց: Հեղինակը վերջին հանգամանքը բացատրում է աշխարհաքաղաքական ուժերի հայտնի դասավորվածությամբ, խուսափելով ամբողջ մեղքը իշխանության մարմինների վրա գցելուց, թեև հատուկ ծառայությունները ևս ունեին իրենց բացթողումներն ու սայթաքումները (էջ 191-192, 204-205):

Եվ, այնուամենայնիվ, կարևորն այն է, որ Վանիկ Վիրաբյանը, բացահայտելով հայկական հետախուզության գործունեությունը 1918-1920 թթ., ինչպես նաև անդրադառնալով թերություններին ու սխալներին՝ եզրակացնում է, որ այդ ամենով հանդերձ, ՀՀ հետախուզական ծառայությունների գործունեությունը պետք է ոսկե տառերով գրվի Առաջին Հանրապետության պատմության տարեգրությունում, որ դա հերոսականության ու մաքառումների գործընթաց էր, որից կարելի է միայն և միայն ուսանելի դասեր քաղել:

Պատմաբան Վ.Վիրաբյանը բավական հաջողված և ինքնատիպ քայլ է կատարել՝ իր հետազոտության օբյեկտ ընտրելով Հայաստանի Առաջին Հանրապետության (28 մայիսի, 1918թ. - 2 դեկտեմբերի, 1920թ.) պատմության բոլորովին անհայտ և չուսումնասիրված թեմաներից մեկը՝ ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը հետախուզության և հակահետախուզության կազմակերպման ու ուղղորդման բնագավառում, և այդ առումով ուսումնասիրվող հարցերը վերլուծության յուրահատուկ ոճով և գիտականության տեսանկյունից բացառիկ բնույթ ունեն :

Հատկանշական է, որ հեղինակը հեռու է որևիցե կուսակցականությունից.

աշխատանքում հստակ երևում է ազգային-պետական շահը ամեն ինչից վեր դասելու մտայնությունը, որից, անշուշտ, սույն ուշագրավ գիրքը շահել է: Հեղինակը նոր մոտեցում է ցուցաբերել քննարկվող հարցերի նկատմամբ: Նրան հաջողվել է ստեղծել հետախույզների կերպարներ, որոնք այսօրվա գործընթացների տեսանկյունից քաղաքական-դաստիարակչական և բարոյական մեծ նշանակություն ունեն:

Վ.Վիրաբյանի տքնաջան աշխատանքի շնորհիվ պատմության սեփականությունն են դարձել այնպիսի անջնջելի ու հերոսական դիմագծեր, ինչպիսիք են հետախույզներ Ալեքսանդր Շնեուրը, Վահագն Մուրադյանը, Տիգրան Դևոյանցը, հակահետախույզ Հովան Խան-Կոտուրսկին և այլք: Առաջին անգամ համակողմանի և հանգամանալից քննարկվում են հարցեր, որոնք դեռևս հետագա ճշտումների ու լրացումների կարիք են զգում, ինչն էլ ավելի նպատակասլաց ու ամբողջական կդարձնի հետազոտված նորահայտ հիմնահարցը: Յուրահատուկ ոճով գրված այս գրքի մուտքը կարելի է միայն ողջունել՝ սպասելով նորանոր բացահայտումների.

ԹՈՒՆՅԱՆ Վ.Գ.
Պատմական գիտությունների դոկտոր